ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

09 հոկտեմբերի 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի տնօրեն
Դավիթ Կոշտոյանին

Հարգելի պարոն Կոշտոյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025թ.-ի սեպտեմբերի 29-ին կնքվել է **ԱՔ-ԳՀԾՁԲ-25/35** ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Կատարողը ստանձնել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղում մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պարտավորությունը: 08.10.2025թ. Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվում եք Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2025թ.-ի հոկտեմբերի 10-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կատարողին տրվում է 5 աշխատանքային օր պայմանագրի ապահովումը **502,483.2 (հինգ հարյուր երկու հազար չորս հարյուր ութսուներեք ամբողջ երկու տասնորդական)** ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Պատվիրատուի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն, Հ/Հ՝ 900335201183)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **Կ. ՄԿՐՏՉՅԱՆ**